ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՍԳԱԿԻՐ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և խորին ափսոսանքով տեղեկացանք անվանի թատերագետ ու գրականագետ Լևոն Հախվերդյանի մահվան մասին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Սուրբ Էջմիածնի միաբանության, Մեր վշտակցությունն ենք բերում հանգուցյալի այրուն և զավակներին, բոլոր հարազատներին ու մերձավորներին, նրա գործընկերներին:

Կյանքից հեռացավ մեր ժողովրդից սիրված ու գնահատված մեծանուն արվեստագետը, ով թողել է թանկ ժառանգություն՝ հայ գրականությանն ու թատրոնին նվիրված ուսումնասիրություններ, արժեքավոր թարգմանություններ և իր սերը արվեստի ու մարդկային վսեմ արժեքների հանդեպ, որն առանձնակի ոգով փոխանցում էր իր ուսանողներին: Վերջին հրաժեշտի այս պահին երախտիքի մեր փուրքը մատուցելով Լևոն Հախվերդյանի բարի հիշատակին, մխիթարության զգացումով հիշենք, որ նրա ժառանգությունը միշտ կապրի սերունդների հետ ու նրա անունը՝ երախտագետ մեր ժողովրդի հոգում:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթում ենք առ Բարեգութ և Ողորմած Աստված, որ երկնային երանական Իր հանգրվաններում խաղաղության ու լույսերի մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի նրա այրուն ու զավակներին, բոլոր հարազատներին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 փետրվարի 2003 թ.